

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2012թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերլուծելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2012 թվականի ֆինանսական տարվա գործունեության արդյունքները, անհրաժեշտ է նշել, որ տարին հաջող էր Բանկի գործունեության համար: 2012թ. ընթացքում Բանկը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, շարունակել է իր շահառուներին ներկայացնել միջազգային պրակտիկայում կիրառվող չափանիշներին համապատասխան բանկային ծառայությունների մատուցման և նոր պրոդուկտների ներդրման գործընթացը: Բանկը գերազանցել է նախորդ տարիների իր եկամտաբերության ցուցանիշները՝ այդպիսով իսկ կարողանալով բավարարել իր բոլոր շահառուների սպասումները: Բանկին հաջողվել է նաև զգալիորեն ավելացնել իր ակտիվների և պարտավորությունների ծավալները՝ հավատարիմ մնալով իր ռազմավարությանը և գերազանցելով բյուջեով նախապես պլանավորված ցուցանիշները:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը շարունակել է իր որդեգրած ռազմավարությունը դեպի ունիվերսալ և մանրածախ ֆինանսական կառույց ձևավորվելու ճանապարհին:

Արձանագրվել է Բանկի ակտիվների էական աճ, որը զուգորդվել է ակտիվների կազմում վարկային ներդրումների տեսակարար կշռի աճով: Նախորդ տարվա համեմատությամբ ակտիվներն աճել են 29.8%-ով՝ 87,576 մլն ՀՀ դրամից կազմելով 113,713 մլն ՀՀ դրամ: Տրամադրված վարկերի ծավալը դրամային արտահայտությամբ կազմել է 53,662 մլն ՀՀ դրամ և նախորդ տարվա համեմատ աճել 15,282 մլն ՀՀ դրամով կամ 39.8%-ով: 31.12.2012թ. դրությամբ Բանկի հաշվեկշռում Վարկային պորտֆելը կազմում է ակտիվների 47.2%-ը:

Հաշվետու ֆինանսական տարին արդյունավետ էր նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության առումով: Բանկը կարևորելով ֆինանսական կառույցների հետ համագործակցությունը, 2012թ. խորացրել է համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, ինչպես նաև նոր համագործակցություն սկսել մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, ինչը հնարավորություն ընձեռեց բանկին տարբեր ծրագրերով ներգրավվել վարկային միջոցներ:

Ներկայումս Բանկն ակտիվորեն համագործակցում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի (EBRD), Համաշխարհային բանկի (WB), Եվրասիական Զարգացման բանկի (EDB), Հարավ-Արևելյան Եվրոպայի Եվրոպական հիմնադրամի (EFSE) և Գերմանահայկական հիմնադրամի (KfW), Green for Growth Fund հիմնադրամի, Incofin Investment Management, responsAbility Global Microfinance Fund, Black Sea Trade and Development Bank ինչպես նաև MasterCard, Visa International, Diners Club միջազգային վճարային համակարգերի հետ:

2012թ. ընթացքում Բանկի կարևորագույն ձեռքբերումներից է այն, որ Բանկը թողարկեց և տեղաբաշխեց թվով 85100 բաժնետոմս, ինչի արդյունքում

RURAL IMPULSE FUND II S.A. SICAV-SIF ձեռք բերեց բաժնետոմսերի մի մասը և դարձավ Բանկի բաժնետոմսերի մոտ 4.99 տոկոսի սեփականատեր: Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ընդլայնմանը և միջազգային համագործակցության զարգացմանը նպաստել են Բանկի հիմնական ռազմավարական ցուցանիշների փոփոխությունները:

Հիմնական ռազմավարական ցուցանիշներ

հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	2011թ.	2012թ.	Աճ (+), նվազում (-)
Ակտիվներ	87,576,361	113,713,133	26,136,772
Հաճախորդներին տրված վարկեր	38,380,036	53,662,023	15,281,987
Պարտավորություններ	75,334,913	97,225,251	21,890,338
Կանոնադրական կապիտալ	5,962,005	6,387,505	425,500
Մասնաճյուղային ցանց, հատ	39	42	3
Բանկումատներ, հատ	58	70	12
Անձնակազմ, աշխատակից	473	585	112
Պլաստիկ քարտեր	85,810	103,015	17,205

Հարկ է նաև նշել, որ 2012 թվականի վերջին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ հաճախորդներից ներգրավված միջոցները կազմել են 50,479 մլն. ՀՀ դրամ, որը 2011թ. համեմատ աճել է 25.4%-ով:

2012 թվականի վերջին Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 16,458 մլն. ՀՀ դրամ, որը 2011թ. համեմատ աճել է 34.4 %-ով:

Բանկի 2012թ.-ի ֆինանսական քաղաքականության գլխավոր խնդիրներից է եղել՝ հաշվի առնելով Բանկի գործունեության վրա ազդող հիմնական գործոնները, ներառյալ միջավայրի փոփոխությունները.

1. Պահպանել և ավելացնել Բանկի ընդհանուր կապիտալը.

2. Ապահովել Բանկի կայուն իրացվելիությունը՝ արդյունավետ կառավարելով բանկի ֆինանսական միջոցները.

3. Ապահովել շահույթի և շահութաբերության բավարար մակարդակ:

Հաշվետու ֆինանսական տարում Բանկի զուտ շահույթը կազմել է 3,332,257 հազ. ՀՀ դրամ: Ստացված արդյունքի հիման վրա հաշվարկված Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները հետևյալն են.

Ցուցանիշի անվանումը	2011թ.	2012թ.	Աճ (+), նվազում (-)
Զուտ շահույթ, հազ. ՀՀ դրամ	2,214,409	3,332,257	1,117,848

ROA (ակտիվների շահութաբերություն) %	2.9	3.2	0.3
ROE (կապիտալի շահութաբերություն) %	19.6	23.7	4.1
EPS – մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ, ՀՀ դրամ	1,857	2,762	905

2011թ. շահույթից 2012թ. վճարվել են շահաբաժիններ՝ զուտ շահույթի նկատմամբ 12.7% դրույքաչափով: Շահութաբաժինների չափը դրամային արտահայտությամբ կազմում է 268,290 հազ. ՀՀ դրամ կամ կանոնադրական կապիտալի 4.5%-ը:

Ռիսկերի կառավարում

Բանկում հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է ռիսկերի կառավարման ոլորտի բարեփոխումների և բարելավման ծրագիրը, որին ակտիվ մասնակցություն են ունեցել Բանկի հետ համագործակցող մի շարք միջազգային խորհրդատվական ընկերություններ:

Բանկի կողմից հիմնական ֆինանսական ցուցանիշների աճին զուգընթաց, Բանկի ղեկավարությունը կատարելագործում է ռիսկերի կառավարման համակարգերը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային պրակտիկայում գործողներին:

Ռիսկերի կառավարմանը տրվում է առանձնահատուկ նշանակություն, մշակվել և շարունակական բնույթ է կրում նոր իրավական ակտերի ընդունումը՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել բոլոր ռիսկերը:

Բանկային ռիսկերից առավել կարևորվում են հետևյալ հինգ խմբերը.

- վարկային,
- իրացվելիության,
- արտարժույթային,
- տոկոսադրույքների փոփոխման,
- գործառնական:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկի կառավարման համար Բանկում կատարելագործվել է վարկային ռիսկի գնահատման մեթոդաբանությունը, որը հնարավորություն է տալիս գնահատել վարկի ռիսկայնությունը:

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է ինչպես առանձին վարկառուների մակարդակով, այնպես էլ՝ պորտֆելի մակարդակով:

2012թ. ստեղծվեց վարկային ռիսկերի գնահատման հանձնաժողովը, որի հիմնական գործառույթն է հայտնաբերել վարկային ռիսկերի կենտրոնացումները և համապատասխան քայլեր ձեռնարկել:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկի կառավարման ընթացքում Բանկի կողմից գնահատվում են ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ռիսկերը՝ կառավարման համար համապատասխան առանձնահատկություններով:

Ռիսկի հնարավորինս նվազեցման նպատակով՝ ընդհանուր իրացվելիության ռիսկը կառավարելիս կանխատեսվում են ներգրավվող և տեղաբաշխվող միջոցներն ըստ ժամկետայնության և ծավալների:

Ընթացիկ ռիսկի կառավարման գործընթացը հիմնված է փաստացի և կանխատեսվող համապատասխան ցուցանիշների օրական շարժի տվյալների վրա՝ հիմք ընդունելով հետևյալ չափանիշները.

1. Բանկի վճարահաշվարկային օրական պարտավորությունները,
2. դրամական հոսքերի օրական շարժը,
3. վարկերի, ավանդների, արժեթղթերի հետ կապված գործառնությունների օրական շարժը,

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկի գնահատման համար հիմք են հանդիսանում ինչպես երկրի իրական հատվածի, այնպես էլ մրցակիցների կողմից ներկայացվող պահանջարկի միտումների վերաբերյալ կատարվող մշտական վերլուծությունները: Բանկում գործում է տոկոսադրույքների փոփոխման ռիսկի գնահատման մեթոդաբանություն, որը հիմնված է տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պասիվների անհավասարության վերլուծության և կառավարման վրա: 2012թ. վերանայվել է «Տոկոսադրույքի ռիսկի կառավարման կարգը», որը նախատեսում է սահմանաչափեր տոկոսադրույքի ռիսկի կառավարման համար:

Արտարժույթային ռիսկ

Այս ռիսկի կառավարման համար կարևոր նշանակություն ունի արտարժույթային դիրքի կառավարումը, դրանից բխող հեջավորման գործիքների կիրառումը: Արտարժույթային ռիսկի հնարավորինս նվազեցման նպատակով՝ Բանկում գործում է արտարժույթային ռիսկի գնահատման մեթոդ: Բանկը ձգտում է վարել արդյունավետ արտարժույթային քաղաքականություն՝ զուգակցելով արտարժույթային դիրքի կառավարումն արդարացված ռիսկի մակարդակի հետ:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկի կառավարումն առավել մեծ կարևորություն ունի Բանկի համար և այս ռիսկը դիտվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ, որոնք պայմանավորված են Բանկի անձնակազմի ոչ համարժեք հմտության կամ սխալ գործողություններով, ընթացիկ աշխատանքի կազմակերպման և կատարման թերություններով, սարքավորումների տեխնիկական անսարքությամբ, ընթացակարգերի անկատարությամբ:


Բանկում ներդրված ընթացակարգերի շրջանակներում Բանկի կառուցվածքային ստորաբաժանումները տանում են համապատասխան հաշվառում եւ շաբաթական կտրվածքով ներկայացնում են հաշվետվություններ՝ գործառնական ռիսկի առաջացման դեպքերի վերաբերյալ: Միաժամանակ դրանք հաշվառվում են նաև հատուկ այդ նպատակով մշակված տեղեկատվական բազայում, որը հնարավորություն է տալիս կատարել վերլուծություններ, ձեռնարկել միջոցառումներ՝ նման ռիսկերի բացառման, կանխարգելման ուղղությամբ:

2012թ. Բանկում ներդրվել և վերանայվել են ռիսկերի կառավարման բնագավառը
կանոնակարգող մի շարք իրավական ակտերը:

ԱՐԱՐԱՐՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամներ՝



Ստեփանյան



Ա. Ստեփանյան